ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 13.10.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-74/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.04.2016թ. թիվ 1/73-3/11095-16, 09.03.2016թ. թիվ 1/73-3/8705-16, 27.04.2016թ. թիվ 1/73-1/12955-16 և 29.04.2016թ. թիվ 1/73-3/13132-16 գրություններով ներկայացված «Ֆարմակ» ՍՊ (ՀՎՀՀ 00012403) և «Սմայլ» ՍՊ (ՀՎՀՀ 01253602) ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-74/16 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության 24.03.2016թ. թիվ ԴՎԱ/711, 19.04.2016թ. թիվ ԴՎԱ/1013 և ԴՎԱ/1008, 15.02.2016թ. թիվ ԴՎԱ/319 գրությունները և կից ներկայացված փաստաթղթերը, «Սմայլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունները, ՍՑ-ԳԲԽ-74/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 11.10.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.04.2016թ. թիվ 1/73-3/11095-16, 09.03.2016թ. թիվ 1/73-3/8705-16, 27.04.2016թ. թիվ 1/73-1/12955-16 և 29.04.2016թ. թիվ 1/73-3/13132-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Ֆարմակ» ՍՊ և «Սմայլ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակիցներին Ցուցակում ներառելու համար:

2. «Ֆարմակ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Կենտրոնը 11.03.2016թ. թիվ 01/04.1/883-16 և 06.04.2016թ. թիվ 01/04.2/1397-16 գրություններով դիմել է «Ֆարմակ» ՍՊԸ-ին և խնդրել է Կարգի 122.1-րդ կետի համաձայն ներկայացնել վերջինիս դիրքորոշումը:

«Ֆարմակ» ՍՊԸ-ն, Կենտրոնի վերոնշյալ գրություններին վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել, իսկ վերջինս պատշաճ ծանուցված լինելով 26.09.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-74/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր կամ իր ներկայացուցչի մասնակցությունը, ինչպես նաև որևէ առարկություններ չի ներկայացրել ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

3. «Սմայլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Կենտրոնը 06.04.2016թ. թիվ 01/04.2/1388-16, 04.05.2016թ. թիվ 01/04.1/1755-16 և 05.05.2016թ. թիվ 01/04.1/1771-16 գրություններով դիմել է «Սմայլ» ՍՊԸ-ին և խնդրել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 122.1-րդ կետի համաձայն ներկայացնել վերջինիս դիրքորոշումը:

«Սմայլ» ՍՊԸ-ն Կենտրոնին ուղղված 21.04.2016թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մասնակցելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված *«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17»* ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, որպես «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշ՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չի եղել ընկերության կողմից ներկայված գնային առաջարկից, իսկ 23.05.2016թ. գրությամբ հայտնել է, որ Կենտրոնի 2016թ. մայիսի 4-ի թիվ 01/04.1/1755-16 և մայիսի 5-ի թիվ 01/04.1/1771-16 գրություններով ներկայացված փաստաթղթերից անհասկանալի է, թե ինչ հնարավոր խախտումների մասին կարող է խոսք լինել: Վերջինս գտնում է, որ Կարգի 122-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Սմայլ» ՍՊԸ-ին ներառելու հիմքեր առկա չեն:

«Սմայլ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 26.09.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-74/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր կամ իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 24.03.2016թ. թիվ ԴՎԱ/711 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել Պատվիրատուի կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի շրջանակներում համապատասխանաբար՝ «Սմայլ» ՍՊ և «Ֆարմակ» ՍՊ ընկերությունների վերաբերյալ ի հայտ եկած տեղեկատվությունը և ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 26.09.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-74/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. ԳԲԽ-58/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 11.10.2016թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության 01.04.2016թ. թիվ 1/73-3/11095-16 և 09.03.2016թ. թիվ 1/73-3/8705-16 գրություններով ներկայացված «Ֆարմակ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 (վեց) ամիս ժամկետով և «Սմայլ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 (վեց) ամիս ժամկետով, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության 27.04.2016թ. թիվ 1/73-1/12955-16 և 29.04.2016թ. թիվ 1/73-3/13132-16 գրություններով ներկայացված «Սմայլ»

ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

6. ՍՑ-ԳԲԽ-74/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 01.04.2016թ. թիվ 1/73-3/11095-16, 09.03.2016թ. թիվ 1/73-3/8705-16, 27.04.2016թ. թիվ 1/73-1/12955-16 և 29.04.2016թ. թիվ 1/73-3/13132-16 գրություններով ներկայացված «Սմայլ» ՍՊ և «Ֆարմակ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

«Ֆարմակ» ՍՊԸ-ի վերաբերյալ

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/12» ծածկագրով ընթացակարգ

- ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/12» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***20.12.2015թ.*** հայտ է ներկայացրել «Ֆարմակ» ՍՊԸ-ն:
- «Ֆարմակ» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ***(20.12.2015թ.)*** չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:
- Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 13.01.2016թ. կատարած հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Ֆարմակ» ՍՊԸ-ի վերաբերյալ:
- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ Պատվիրատուին 18.01.2016թ. տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն «Ֆարմակ» ՍՊԸ-ն 20.12.2015թ. դրությամբ (հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 61,302 ՀՀ դրամի չափով:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգ

- ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/1» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 17.***12.2015թ.*** հայտ է ներկայացրել «Ֆարմակ» ՍՊԸ-ն:
- «Ֆարմակ» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ***(17.12.2015թ.)*** չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:
- Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 15.01.2016թ. կատարած հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Ֆարմակ» ՍՊԸ-ի վերաբերյալ:
- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ Պատվիրատուին 20.01.2016թ. տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն «Ֆարմակ» ՍՊԸ-ն 17.12.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 61,302 ՀՀ դրամի չափով:

«Սմայլ» ՍՊԸ-ի վերաբերյալ

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգ

- ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***20.12.2015թ.*** հայտ է ներկայացրել «Սմայլ» ՍՊԸ-ն:

• «Սմայլ» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (20.12.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

• «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2015թ. թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ 2-րդ և 7-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Սմայլ» ՍՊԸ-ն:

• Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

• Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 12.01.2016թ. կատարած հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Սմայլ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

• Պատվիրատուն 12.01.2016թ. (armeps.am) համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցել է «Սմայլ» ՍՊԸ-ին և հայտնել, որ անհրաժեշտ է հրավերով սահմանված կարգով և ժամկետում g.teryan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

• «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2016թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Սմայլ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել գնման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

• Ի պատասխան 12.01.2016թ. հարցմանը՝ Պատվիրատուին 20.01.2016թ. տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն «Սմայլ» ՍՊԸ-ն 20.12.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 318,206 ՀՀ դրամի չափով:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգ

• ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***24.12.2015թ.*** հայտ է ներկայացրել «Սմայլ» ՍՊԸ-ն:

• «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2015թ. թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ 3-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Սմայլ» ՍՊԸ-ն:

• Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

• Պատվիրատուն 20.01.2016թ. (armeps.am) համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցել է «Սմայլ» ՍՊԸ-ին և հայտնել, որ անհրաժեշտ է հրավերով սահմանված կարգով և ժամկետում g.teryan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

• «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.01.2016թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Սմայլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերը կերակրի աղի մատակարարման պայմանագիր է, ինչպես նաև բացակայում է թիվ 5 հավելվածը, ուստի

հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է ծանուցել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

- Սահմանված ժամկետուն «Սմայլ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել անհամապատասխանությունները, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից վերջինիս հայտը մերժվել է:

«Սմայլ» ՍՊԸ-ն Կենտրոնին ուղղված 21.04.2016թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մասնակցելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված *«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17»* ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, որպես «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշ՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չի եղել Ընկերության կողմից ներկայված գնային առաջարկից, իսկ 23.05.2016թ. գրությամբ հայտնել է, որ Կենտրոնի 2016թ. մայիսի 4-ի թիվ 01/04.1/1755-16 և մայիսի 5-ի թիվ 01/04.1/1771-16 գրություններով ներկայացված փաստաթղթերից անհասկանալի է, թե ինչ հնարավոր խախտումների մասին կարող է խոսք լինել:

7. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-74/16 բողոքը, հայտնում է հետևյալը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.04.2016թ. թիվ 1/73-3/11095-16, 09.03.2016թ. թիվ 1/73-3/8705-16, 27.04.2016թ. թիվ 1/73-1/12955-16 և 29.04.2016թ. թիվ 1/73-3/13132-16 գրություններ, ՀՀ պաշտպանության նախարարության 24.03.2016թ. թիվ ԴՎԱ/711, 19.04.2016թ. թիվ ԴՎԱ/1013 և ԴՎԱ/1008, 15.02.2016թ. թիվ ԴՎԱ/319 գրությունները և կից ներկայացված փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Ֆարմակ» ՍՊԸ-ի վերաբերյալ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 13.01.2016թ. և 15.01.2016թ. կատարած հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Ֆարմակ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ի պատասխան 13.01.2016թ. և 15.01.2016թ. հարցումներին՝ Պատվիրատուին 18.01.2016թ. և 20.01.2016թ. տրամադրվել են եզրակացություններ, որոնց համաձայն «Ֆարմակ» ՍՊԸ-ն 17.12.2015թ. և 20.12.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)՝ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 61,302 ՀՀ դրամի չափով:

Հաշվի առնելով վերագրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Ֆարմակ» ՍՊԸ կողմից ***«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/12» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/1»*** ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ***17.12.2015թ. և 20.12.2015թ.*** հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունները հանդիսանում է Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի **«բ»** ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*

• *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Ֆարմակ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Կենտրոնը արձանագրում է, որ «Ֆարմակ» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը:

Մասնավորապես, «Ֆարմակ» ՍՊԸ-ի կողմից 17.12.2015թ. թույլ է տրվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով սահմանված խախտումներ և միևնույն ժամանակ առկա է առաջին խախտումը թույլ տալուց հետո մասնակցի կողմից 20.12.2015թ. ներկայացված հայտ, որի շրջանակներում մասնակցի կողմից նույնպես թույլ է տրվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով սահմանված խախտում:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:***

«Սմայլ» ՍՊԸ-ի վերաբերյալ

1. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորություն,*** որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

• ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***20.12.2015թ.*** հայտ է ներկայացրել «Սմայլ» ՍՊԸ-ն:

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2015թ. թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ 2-րդ և 7-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Սմայլ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Պատվիրատուն 12.01.2016թ. (armeps.am) համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցել է «Սմայլ» ՍՊԸ-ին և հայտնել, որ անհրաժեշտ է հրավերով սահմանված կարգով և ժամկետում g.teryan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2016թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Սմայլ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել գնման ընթացակարգի հրավերով պահանջվող

որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

• ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***24.12.2015թ.*** հայտ է ներկայացրել «Սմայլ» ՍՊԸ-ն:

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2015թ. թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ 3-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Սմայլ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Պատվիրատուն 20.01.2016թ. (armeps.am) համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցել է «Սմայլ» ՍՊԸ-ին և հայտնել, որ անհրաժեշտ է հրավերով սահմանված կարգով և ժամկետում g.teryan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.01.2016թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Սմայլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերը կերակրի աղի մատակարարման պայմանագիր է, ինչպես նաև բացակայում է թիվ 5 հավելվածը, ուստի հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է ծանուցել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետուն «Սմայլ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել անհամապատաս-խանությունները, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից վերջինիս հայտը մերժվել է:

Այսպիսով «Սմայլ» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի **«ա»** ենթակետի խախտում, այն է՝ **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> ավելի քան մեկ անգամ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:**

Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն «Սմայլ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 24.12.2015թ.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 27.04.2016թ. թիվ 1/73-1/12955-16 և 29.04.2016թ. թիվ 1/73-3/13132-16 գրություններով ներկայացված «Սմայլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Հայտնում ենք, որ խախտումը թույլ տալու պահից (24.12.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Սմայլ» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 12.01.2016թ. կատարած հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Սմայլ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ի պատասխան 12.01.2016թ. հարցմանը՝ Պատվիրատուին 20.01.2016թ. տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն «Սմայլ» ՍՊԸ-ն 20.12.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 318,206 ՀՀ դրամի չափով:

Հաշվի առնելով վերագրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ «Սմայլ» ՍՊԸ կողմից ***«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3»*** ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ***20.12.2015թ.*** հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունները հանդիսանում են ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի **«բ»** ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Սմայլ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Կենտրոնը արձանագրում է, որ «Սմայլ» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը:

Մասնավորապես, «Սմայլ» ՍՊԸ-ի կողմից թույլ են տրվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով սահմանված խախտում՝ 20.12.2015թ-ին, և միևնույն ժամանակ առկա է առաջին խախտումը թույլ տալուց հետո մասնակցի կողմից՝ 24.12.2015թ. ներկայացված հայտ:

Ինչ վերաբերում է «Սմայլ» ՍՊԸ-ի կողմից 21.04.2016թ. գրությանը, ապա հայտնում ենք, որ ընկերության կողմից գրության մեջ նշված ***«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17»*** ծածկագրով ընթացակարգի առնչությամբ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությանը որևէ գրություն չի ուղարկվել, իսկ սույն բողոքի շրջանակներում վերջինիս կողմից որպես «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի խախտման վերաբերյալ նույնպես որևէ փաստ չի արձանագրվել՝ հետևաբար ուսումնասիրության չի կատարվել, ուստի այս պարագայում արձանագրում ենք, որ «Սմայլ» ՍՊԸ-ի կողմից 21.04.2016թ. գրությունը որևէ կերպ առնչություն չունի տվյալ բողոքի հետ:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության 01.04.2016թ. թիվ 1/73-3/11095-16 և 09.03.2016թ. թիվ 1/73-3/8705-16 գրություններով ներկայացված «Ֆարմակ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00012403) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 (վեց) ամիս ժամկետով և «Սմայլ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01253602) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 (վեց) ամիս ժամկետով:

2. ՀՀ ֆինանսների նախարարության 27.04.2016թ. թիվ 1/73-1/12955-16 և 29.04.2016թ. թիվ 1/73-3/13132-16 գրություններով ներկայացված «Սմայլ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01253602) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գոռ Գրիգորյան**

Անդամ՝ **Դիանա Գրիգորյան**

Անդամ՝ **Համլետ Գասպարյան**